

Յիշատակարանն առաջին անգամ հրատարակեց Բաղուրան, էջ 109—110. սակե՛ Բարդէն Ա. կաթողիկոս, Պատմ. կաթողիկոսաց Սոց, էջ 146—148: Գրութեան տարին չէ նշանակուած. Բարդէն կաթողիկոս կը համարի «1551—1571» տարիներէն:

Սիւսի աթոռին վրայ կը յիշուին երեք համանուն կաթողիկոսներ.

- Սաւառուր Ա. Չորիկ 1550—1560.
- „ Բ. 24 յիշուցի 1560—1584.
- „ Գ. Միստէրճի, 1657—1674:

Յիշատակարանը գրուած է «յուլիս Բ. յատուր երկուշարթի սուրբ Լուսաւորչի պահոցն»: Ամսոյն օրը «Բ» դժուարեմիտներն է. Բաղուրան չէ կրցած կարգաւ: Նկատի առնելով, որ Ս. Լուսաւորչի պահքը յուլիսի սկիզբը (1—4) կրնայ պատահել միայն այն տարիներուն, երբ Չատիկը կը հանդիպի ապրիլ 21—25ին, և այն 1550—1674 շրջանին միայն 1565, 1576, 1658, 1669 տարիներուն, իսկ յուլիս 2 երկուշարթի միայն 1565ին, կրնանք Յիշատակարանին գրութեան տարին ստուգութեամբ ճշգրէլ՝ 1565, յուլիս 2:

Կը յիշեմ այս տեղ աթոռն, որ Սաւառուր Գ. կաթողիկոս 1668ին դանտած է Կիպրոս և սակէ Կրետէ փոխադրած է Ս. Մամասի նշխարները, «ստուկալ յրնծայ Փրանկիսկոսի Մարտիկնայ սպարապետի և զքսի Վենետիկացոց՝ տէր Սաւառուր կաթողիկոս Սոց ի Կրետէ կղզուջ, ի զալ առ նա յամի Տետոն 1668, ի Կիպրոսէ ընդ Գրիզորի քահանայի Կրեակոսնց Չմիւռնացոց. զորոց և զհայերէնազիբ կնքոց և զստորագրութեանց ստուգութիւն՝ առ նախնեօք մերովք ետուն յեղուլ ի լատին բարբառ աւանդապահք նշխարաց Սրբոցն»: Հ. Մ. Ազգերեան, Լիակատար Վարք և Վ. Սրբոց, հատոր 2., էջ 19 և 24:

9. Թ. Ղ. 1ա. Թ. Վին (Ռ) ճժԻ (1669) ապրիլ Գ. զատիկին:

Թ. Վին ՌճժԹ (1670) ևս (Սը) սցի 0 հան եպիսկոպոսն եկի նուիրակ Լօքօշա և էի առաջնորդ մայրաքաղաքին Մելիտինու և Արմիստաճի (°). և է իմ առաջնորդութեն սուտ քրիստոնեայ անուն Վարդան կասեմ և է գլուխ (°) դատաւորաց խամազ և ա ||| իրող. Աստուած անէ դատաստան ի ||||| ընդ նորայ. Կիպրոսի աթոռակալութեան Յովանէս եպիսկոպոսին և կաթողիկոսութեան Սաւառուրին. Կիպրոսի աթոռակալութեան Յովանէս եպիսկոպոսին և կաթողիկոսութեան (տետոն) տէր Յակոբին ||||| և երեսփոխան մահտեսի Բաղրամին, որ է լաւ, ողորմած մարդ, Աստուած պահէ զիւր որդիք զԱկոբն, ևս ով որ կան ընդ իւրեանս. խիստ նեղութիւն կայ ի վերայ երկրի, որ ոչ գրեցաք վասն չճանճրանալոյ լսողացն. Եթէ հոգեւոր և էթէ մարմնաւոր և խոսնակու-

թիւն առաջնորդաց մերոց որ դատարկացաւ վանորայքն և մնաց անմխարան. զայլն իմաստութեամբ իմանաք: Գրեցաւ ապրիլ Ե. օրն Գ.:

Չորս երկաթագիր Մագաղաթեայ Պահպանակներու բովանդակութիւնն է Յովհաննու Աւետարանի Գ. 39—Ե. 26: Կը նշանակեմ Չօհրայեան օրինակէն չեղուններն և իւրաքանչիւր թուղթին բովանդակութիւնը:

- 1. Յովհ. Գ. 39 գործեալ էր — 50 որդինքո: Ընթերցուածք. 42 փրկիչն. 47 թշնկեցէ. 48 ասէ ցնա Յիսուս. 49 թագաւորացին:
- 2. Գ. 18 չէ քո այր — 28 և է չո |||: Ընթերցուածք. 19 էթէ՛ 22 գիտեմք. 24 պարտ է հուլով և ճշմարտութեամբ. 27 և յայնմ բան. 28 զսափոր իւր և է չո (զաւ):
- 4. Գ. 50 կենդանի է — Ե. 7 յաւազանն: Ընթերցուածք՝ 51 ետուն նմա և ասեն. 53 տունն իւր. Ե. 2 բրո (պատի) կէ. համար 4 կը պակսի. 5. ամ է. 6 իրբեւ ետես զի անկեալ. 7 յուզեցին արկցեն:
- 3. Ե. 18 զանձն Աստուծոյ — 26 և էտ: Ընթերցուածք. 19 և որդին նման նմին նման գործէ. 20 զնոյն |||. 20 զգործան. 66 որդւոյ իւրում. 23 զորդին. 23 չպատուեա որդին ոչ պատուեա զհայր. 24 հաւատոյ յա |||: 25 զի զոյ ժամանակ. 25 լուիցենն կեցցեն. 26 նոյնպէս և էտ |||:

(Շարունակելի:) 2. Ե. ԱԿԻՆԵԱՆ

ՈՍԿԵՆ ԳԵՐԳՆՍԵՆԸ

Անոնք որ առիթ ունեցած են թերթելու Պոլսոյ «Բուրաստան Մանկանց»ը, «Մասիս»ը, «Երկրագունտ»ը, «Պատկեր»ը, և այլն, հանդիպած են պարբերաբար երեւոյող բանաստեղծական ջնքուշ հոգիի մը — Կարապետ Ոսկեանի — առինքնող լարերուն, ուր ամենալսեմ հոգեկան զգածումներն ու սրտի թրթռացումները մարմին կը զգենուն կատարելագոյն արուեստով մը:

Անոնք որ Պոլսոյ Հայտար Փաշայի «Երկաթուղւոյ Ընկերութեան» և կամ նոյն Ընկերութեան հայ անդամներու կազմած «Հայ Պաշտօնեաներու Ազգօգուտ Միութեան» անդամ եղած են՝ զնահատած են ազգասիրական գործունէութիւնը Յարութիւն Ոսկեանի, որ ա՛յնքան Հայերու պաշտօն և գործ գտնելու պատճառ եղած է:

Ոսկեան անունը ոչ միայն սիրելի, այլ և յարգելի ու պատկառելի դարձուցած է սակայն Ոսկեան Գերդաստանի մեծագոյն ղէմքը — Գրիգոր Ոսկեան — Մաքսատան Գրաքննիչի և Կրթական Նախարարութեան մէջ Ընդհանուր Գրքնիչի պետական պաշտօններով, որոնց մէջ իր միակ ուրախութիւնն եղած է ամէն կերպով օգտակար հանդիսանալ իր ցեղակիցներուն:

Գոհ ենք որ առիթ կը տրուի մեզ Հայ Կաթողիկէ Համայնքի մէկ փառքը կազմող Գերդաստանի մը հակիրճ պատմութիւնը ծանօթացնելու աւելի լայն շրջանակներու:

Ա. ԳԵՐԳՆԱՍՏԱՆԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԲՆԱԳԱՒԱԹԸ

Ոսկեան Գերդաստանի հայրենիքն եղած է Անատոլուի Կուտիմա (Քէօթահիա) քաղաքը, ուսկից Գերդաստանի մէկ ճիւղը 1840ին Պոլիս փոխադրուած և հոն հաստատուած է:

Գերդաստանի ծագումի և անոր նախնիքներու մասին ստոյգ տուեալներ չունինք: Մեզի կը թուի թէ կրնանք սակայն առանց սխալելու Կուտիմայի Կաթողիկէ Ոսկեաններու հնութիւնը գոնէ մինչեւ ԺԸ. դարու կէսերը բարձրացնել: Առ այդ մեր ունեցած կուռանն է՝ գոյութիւնը երկու կարեւոր ղէմներու, որոնք 1770ական թուականներուն Կուտիմահայ Կաթողիկէներու մէջ աչքառու դեր մը կը կատարեն և կը կոչուին «Նարքաթ Ոսկեանք, Գէորգ և Պարոն Գրիգոր»:

Բարբախտութիւն մըն է հաստատել թէ ուսումնասէր Մխիթարեան մը՝ Հ. Պետրոս Շիւքիւրեանց, իր «Պատմութիւն քաղաքին Կուտիմայի» Ձեռագիր գործին մէջ¹ պատմելով Կուտիմահայոց ԺԸ. դարու կրած կրօնական հալածանքը՝ աւանդած է նաեւ քանի մը կարեւոր ծանօթութիւններ Կուտիմայի Հայոց ներքին կեանքէն, որոնց մէջ նաեւ Ոսկեանց յիշատակութիւնը: Օգտուելով Շիւքիւրեանցի վերոյիշեալ գրութեանէ՝ պիտի տանք համառօտ ակնարկ մը 1750—1790ի շրջանին Կուտիմայի Հայոց վիճակի մասին, ուր պիտի տեսնենք նաեւ թէ ի՛նչ պարագաներու մէջ երեւան կու գայ, առաջին անգամ, Ոսկեանց անունը:

1760—1770ին Կուտիմա հայաշատ քաղաք մը կը ներկայանայ, ուր կան Ս. Աստուածածին Մայր-եկեղեցիէն զատ՝ Վարի քաղի Ս. Սարգիս և Վերի քաղի Ս. Թէոդորոս եկեղեցիները: 1755ին համար իբր Առաջնորդ յիշատակուած Աքանաս վարդապետէն² վերջ քաղաքը երկար ատեն Առաջնորդ չէ ունեցած: «Ռամկախօս» ժողովուրդը զուրկ է ե՛ւ «բանին կենաց» քարոզէ ե՛ւ լոյս ու զիտութիւն ջամբող զպրոցէ:

Ահա այս միջոցներուն է որ Գաղատիոյ և Գարահիսարի վրայէն անցնելով Կարնէն Կուտիմա կը հասնի Յովհաննէս Տէտէ անունով վարդապետ մը, ուսած Պոլիս՝ Պաղտասար Գալֆայի ղարոցը (Ձեռ., էջ 11): Յովհաննէս Վ. Կուտիմա կը մտնէ 1766ին, դեմաւորուելով քաղաքին հայ քահանաներէն ու իշխաններէն, որոնք կ'առաջնորդեն զինքը Ս. Սարգիս եկեղեցին: «Ապա սկսանի մեծաւ սիրով քարոզել և օգտակար բանիւք խրատել զժողովուրդն ի սէր աստուածային պատուիրանաց»: Շարաթ մ'անցած՝ Յովհաննէս Վ. ղարոց կը բանայ, սկսելով նախ մէկ, յետոյ երկու, երեք, չորս... հարիւր և երկու հարիւր աշակերտով: Ուսուցման դիւրութոյց մեքոտը սիրելի կը դարձնէ ուսումը և փոքրերու հետ մեծեր ալ խառնուած՝ կը կարդան ու կ'օրինակեն «Կտակարան», «Նարեկ», «Մաղմոս», «Քերական», և այլն: «Ի դուզնաքեայ ժամանակի, կը զբէ պատմիչը, մանկունք և աղջկունք Կուտիմա քաղաքին և ևս մեծամեծ ղպիրքն, այլ և ալեւոր մարդիկ

¹ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Ձեռագրաց բաժնի մէջ 518 թիւը կը կրէ այդ Ձեռագիրը: Փոքրագիր տետրակ մը՝ 49 էջով, նոտրդիր: Գրուած է ԺԸ. դարու վերջը կամ 1800ի սկիզբը:
² Բիւրակն, Կ. Պ. 1900, էջ 372:

ոմանք եւ ի քահանայից ոմանք ընդ փոքրագոյն մանկանց հետ ի դաս նստեալ՝ ուսանէին զգիրտութիւնս» (անդ՝ էջ 6) :

Ուսման վայրն է եկեղեցւոյ դաւիթը, ուր իւրաքանչիւր աշակերտ բերած է իր «խշտին», շատեր նաեւ իրենց ուսելիքը եւ նստած գետնի վրայ :

Դասը կը տեւէ մինչեւ կէսօր, որմէ վերջ կը սկսի տրամաբանութեան դասընթացքը, իսկ մեծերու համար մասնակի դասեր՝ կը տեւեն մինչեւ կէսգիշեր ու «վառեալ լուսով» տուն կը դառնան :

Ս. Սարգիս եկեղեցւոյ զպրոցի այս ընթացքը կը տեւէ 3 տարի «եւ բարեպաշտօն իշխանաց եւ քահանայից օգնութեամբ» «գիրտութիւնք տարածեցան ի քաղաքն Կուտինս» . «մանկանցն ուսուցնասիրաց սակեզօժ ժամանակ մի եղև, որք ի միջոցին այնմ իկ եղեն ստացեալ զգիրտութիւնս բազումս եւ արհեստս զանազանս» (անդ՝ էջ 7) :

1769—1770ին վերի թաղի քահանան — Տէր Ստեփան Կոստանդնուպոլսեցի — կը հրաւիրէ Յովհաննէս Վ.ը իւր թաղը, հոն եւս բանալու համար զպրոց մը . «առեալ տաբաւ ի վերին եկեղեցւոյն եւ նստեցոյց . եւ սկսաւ ժողովել զմանկունս բազումս . մեծաւ ըզձիւ սկսան զրել եւ ընթեռնուլ, ի դաւիթ սրբոյ եկեղեցւոյն, զի եղանակն ամառն էր» (անդ՝ էջ 7) :

Իսկ ձմեռը անկարելի ըլլալով այդտեղ շարունակել դասերը՝ քահանան ընդարձակ գետնի մը վրայ կը շինէ «զպրատուն մանկանց մեծ եւ վայելուչ» :

Քահանան օր մը տեսնելով որ սղաք հասերէն (հայեվար) չեն խօսիր՝ կը խնդրէ վարդապետէն որ փոքրերուն «հայեվար լեզու» սորվեցնէ : Վարդապետին հաճելի ըլլալով այս առաջարկը՝ «սկսաւ ուսուցանել զհայեվար լեզուն զփոքրագոյն մանկանց . երեք ամիս էանց ոչ էանց՝ սկսան մանկունքն խօսակցիլ ընդ միմեանս հայեվար . զնալով զնալով բնաւ բնաւ բարձաւ ի զպրատանէն ռաւկօրէն լեզու» (անդ) :

Մինչ այդ՝ մեծապէս աճած էր աշակերտներու թիւը եւ ծեր վարդապետը կը դժուարէր հասնիլ ամէնուն : Վարձքով ուսուցիչ կը բռնուի փոքրերուն համար Տիրացու Յարութիւն (անդ՝ էջ 8), իսկ մեծերու դասերուն կը նայի Յովհաննէս Վ., միշտ անպակաս ընելով նաեւ ժողովուրդի խօսած քարոզը :

Յովհաննէս Վ. ինը տարի կը շարունակէ Կուտինայի մէջ սկսած զպրոցական այս աշխատանքը : 1775ին իր հասցուցած աշակերտներուն յանձնելով շարունակութիւնը՝ ինքը կը մեկնի Պոլիս, ուր 1777ին կը մեռնի (անդ՝ էջ 21) եւ Պալըզլըի գերեզմանատունը կը թաղուի :

Յովհաննէս Վ. ի առաջին յաջորդը կ'ըլլայ Տիրացու Յարութիւն, որ տարի մը միայն կը վարէ զպրոցական գործերը : Ասոր կը յաջորդէ 1776ին Մահտեսի Սահակ Աւագ Սարկաւազ, որուն տնօրէնութիւնը կը տեւէ երկու տարի եւ 1778ին ծագած Կուտինայի մեծ հալածանքին կը փակուի զպրոցը, որուն վրայ քիչ յետոյ :

Karl Ritter³ խօսելով հայ հին բարձրագոյն վարժարաններու վրայ՝ կը յիշէ Կարնեցի Յովհաննէս Վ. ի Կուտինայի մէջ հիմնած այս զպրոցը, զրելով թէ «1770ին Կուտինայի մէջ հիմնուեցաւ հայ վարժարան մը» : Հիմնուած տարին, ինչպէս յիշեցինք, 1766 է եւ տեղի ունեցած Վարի թաղի կամ Ս. Սարգսի թաղին մեծ :

Կուտինայի Հայոց հալածանքը մասը կը կազմէ Կաղզուանցի Զաքարիա Փոքրգեան (1773—1799) եւ Յովհաննէս Համատանցի (1781—1782) Պատրիարքներու հանած հալածանքին⁴ :

Կուտինայի հալածանքը տեղի ունեցած է, ըստ յիշեալ Զեռագրին, հետեւեալ պարագաներու մէջ :

1777 Դեկտ. 17ին վարժարանի տեսուչ՝ Մահտեսի Սահակ Աւագ-Սարկաւազ զատի մէջ կը գտնուէր, երբ Հայոց կողմէ զրկուած հրաւիրակ մը զինքը թուրք դատաւորին առջեւ կը հանէ : Առանց պատճառը յայտնելու՝ դատաւորը կը բանտարկէ Սահակը, քիչ յետոյ բերել տալով եւ բանտարկելով նաեւ Տէր-Աստուածատուր անունով քահանայ մը եւ վերջոյ շեշտ Տիրացու Յարութիւնը : Երեւան կ'ըլլէ որ բանտարկեալները ամբաստանուած են «վասն ուղղափառութեան եւ վասն ուսումնարանին», «զի սոքա ի ձեռն ընթերցողութեան զբոլոր քաղաքն մեր ի Քրանք դարձուցին» (Ձեռ. էջ 22) :

Իրիկուան դէմ երաշխաւորութեամբ կ'արձակուին բանտարկեալները, պայմանաւ որ առտու դարձեալ դան : Յաջորդ օրը 600 Հայերու զլուխ անցած Տէր Յովհաննէս Պայ-

³ Die Erdkunde, X. 633.
⁴ Աւետիս Պէրպէրեան, Պատմ., էջ 2—3:

րամեան եւ Տէր Պօղոս՝ թուրք դատաւորին կ'ամբաստանեն բանտարկեալները, ըսելով թէ «սոքա Փրանք եւ Մոսկով են» . պահանջելով որ մէջտեղէն վերցնէ զանոնք . «կամ սոքա կեցցեն կամ մեք» (Ձեռ. էջ 22) :

Թուրք դատաւորը համոզուելով թէ եղածը լոկ ներքին, կրօնական խնդիր մ'ընէ՝ կը հետաքրքրուի միայն անով թէ բանտարկեալները իրենց պետական տարբեր վճարած են : «Եւ իշխանքն տաճկաց, որք անդր նստեալ էին, ասեն . իսրաքն իկազարին սոքա քաղաքիս մերում այլ եւ բազմաց աղքատաց զխաբանն եւս տան յիւրեանց քաղաք եւ փրկեն վասն սիրոյն Աստուծոյ» : Այն ատեն՝ ձեր խնդրը ձեր «փաթրիք»ին զիտնալիք բանն է, կ'ըսէ թուրքը, եւ երկու կողմէն ալ տուգանք գանձելով՝ կը հեռացնէ զիրենք :

Ամբաստանող կողմը գոհ չըլլալով այդ եղածէն՝ պատգամաւորութիւն մը կ'ուղարկէ Պոլիս, Զաքարիա Պատրիարքին, մասնաւոր ղեկուցադրով : Զաքարիա Պատրիարք իր փոխանորդը՝ Յովհաննէս Կեսարացի վարդապետը Առաջնորդ կարգելով՝ Կուտինա կը ղրկէ⁵ : Յովհաննէս Վ. Կեսարացի Կուտինա հասնելուն՝ առաջին գործը կ'ըլլայ փակել վարժարանը, ուր 230 սղաք կը շարունակէին իրենց ուսումը (Ձեռ. էջ 25), իսկ վարժապետները՝ Մահտեսի Սահակ, Տիրացու Յարութիւն եւ Տէր Աստուածատուր Պոլիս՝ Պատրիարքին կը ղրկէ :

Վարժապետները 1778 Փետր. 23ին Կուտինայէ մեկնելով՝ Պիլիճիկ 17 օր մնալէ վերջ՝ կը հասնին Պոլիս : Հոս մէկ կողմէ ժանտամահը, միւս կողմէ հալածանքը տաւուր մ'ընողը մը ստեղծած էին : Մարդիկ այդ երկուքին վախէն չէին համարձակել իրենց անէն դուրս ելլելու : Աքսորականները Բերայի մէջ տուն մը վարձելով՝ չորսուկէս ամիս կը նստին : Յետոյ, հալածանքի սաստկանալուն, ապահովութեան համար իտալացի ընտանիքի մը տունը կը փոխադրուին, ուր եօթուկէս ամիս կը մնան :

Այս միջոցին հինգ հօգի, կարծելով թէ հալածանքը մեղմացած է, Կուտինայէն Պոլիս կու գան՝ քսորական վարժապետները Կուտինա տանելու համար : Ու մինչ իրար տեսնելով պահ մը կ'ուրախանային՝ ահա կը

⁵ Մկրտիչ Վ. Աղանունիի անձանօթ եղած է այս Յովհաննէս Վ.ը, որուն համար ալ իր կազմած ցանկին մէջ (Բիւրակն. 1900, էջ 371—374) պահաս է այս անունը : Յովհ. Վ. Կուտինա կը հասնի 1778 Փետր. ին :

հասնի զինուորներու ընկերակցութեամբ եւ ձերբակալելու Փէրմանով չառուշ մը, որ կ'ուզէ ձերբակալել վարժապետները : Բարեբախտաբար տունը Վենետիկեան Պետութեան դրօշը կրելուն եւ դեսպանական միջամտութիւնը օգնութեան հասնելով՝ բռնութիւն չեն կրնար ի գործ դնել : Վենետիկի դեսպանին միջոցաւ վարժապետները կ'ազատին ի վերջոյ եւ կը պահուին ապահով ընակարանի մէջ՝ վայելելով դեսպանին ասպնջականութիւնը (Ձեռ. էջ 32) :

Բարեսիրտ մարդիկ խորհուրդ կու տան որ հանգիստ նստելով ազատութիւնը չի կրնար դալ . եթէ ազատիլ կ'ուզէք՝ ծանարտակ (խնդրագիր) մ'ալ դուք տուէք : Այս դադափարը լաւ գտնելով վարժապետները՝ կը հաւանին ծանարտակ տրուելուն : Հոս Զեռագրի հեղինակը կը գրէ բառաւորաւ . «Մեք եւս լաւ վարկանելով՝ մինն ի մէնք, որոյ անունն էր Մահտեսի Գէորգ Ոսկեան [Բ], գնաց իւրովի ծանարտակ իմն գրեալ տուա ի ձեռս Մովսէսի եւ նա առեալ զՍեղիքս մեր՝ հրովարտակ իմն ազատութեան տուեալ՝ հրամայեաց շրջել հրապարակաւ, ուր եւ կամիք . մեք եւս սկսաք շրջել բացարձակ» (Ձեռ. էջ 33) :

Ազատութեան այս հրովարտակը կ'ըլլէ 1779 Սեպտ. 29ին :

Մահտեսի Գէորգ Ոսկեան մին էր այն հինգ անձերէն, որոնք Կուտինայէն Պոլիս եկած էին՝ վարժապետները Կուտինա վերադարձնելու համար :

Կը տեսնուի որ իրբեւ «ուղղափառ» կամ կաթողիկէ հալածուած վարժապետներու բարեկամ, զաղափարակից եւ պաշտպան մ'ընէ Գէորգ Ոսկեան, որ միւս կողմէ գործունեայ եւ ազդեցիկ անձի մը տպաւորութիւնը կը թողու :

Կուտինայի վարժապետները ազատութիւն գտնելէ վերջ՝ իրենց բարեկամներուն հետ 1779 Նոյ. 12ին ձամբայ ելլելով Պոլսէն՝ կը դառնան Կուտինա :

Դժբախտաբար հակառակութեան ոգին հանդարտած չէր տակաւին քաղաքին մէջ, իսկ վարժապետներու վերադարձը աւելի եւս կը զրգոէ իրենց հակառակորդները, որոնք որոշում կու տան «զի բարձրեցն զանունն ուղղափառութեան» : 1780 Յայտնութեան տօնին «զեկարան իմն գրեալ քահանայք հանդերձ իշխանօք մատուցին ի ձեռս բռնաւորին», այսինքն Եւլիէն Ալի Փաշային, որ զինուորնե-

պարզ մահարձան մը կը կանգնեն իր գաւակները⁹:

Արիստակէս Ոսկեանի մահէն վերջ Տիկ. Մարիամ 31 տարի ալ կ'ապրի, սակայն սուղն ու շիւանը անպակաս կ'ըլլան ընտանիքէն ներս: Վշտաշարժար մայրը ետեւէ ետեւ հողին կը յանձնէ սիրասուն գաւակներ, որոնց ցաւին տակ ի վերջոյ կը կքի ինքն ալ: Իր մահը տեղի ունեցած է 1910 Ապրիլ 5ին եւ թաղուած հաւանօրէն Գատըգիւղի ազգ. գերեզմանատունը:

Արիստակէս Ոսկեանի լուսանկարը տեսած չենք տեղ մը: Տիկ. Մարիամինը հրատարակուած է «Մտի ժամեր»-ի մէջ (էջ 184):

Գ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՈՍԿԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԷՆ ՆԵՐՍ

1870ի Բերայի ահռելի հրդեհը անմոռանալի յիշատակ մը ձգած է պատմութեան մէջ: Հարիւրաւոր բարեկեցիկ ընտանիքներ քանի մը վայրկեանի մէջ մոխրոյ վրայ նստեցուցած է: Դէպքը տեղի ունեցած է հետեւեալ պարագաներու մէջ:

1870 Մայիս 24, Կիրակի օր, Թաքսիմի ետեւը՝ Ֆէրիտիէ ըսուած փողոցը դոց տնէ մը կրակը բռնկելով եւ բուն հովէն մտրակուելով՝ անբացատրելի արագութեամբ հարիւրաւոր տներ մէկէն կրակի ծով կը դարձնէ՝ մէկ կողմէ Թաքսիմի ետեւէն դէպի մեծ փողոց, միւս կողմէ դէպի վար՝ Եէնիշէհի եւ Փափագքէօփրիւսի ըսուած թաղերը եւ երրորդ թեւով ալ դէպի Քոնստանուլա, Թաուլապաշի եւ Գալիօնձուղուլուք ընթանալով: Փայտաշէն տները յարդի պէս կը մոխրանան, իսկ ահագին քարաշէն տներ ու շէնքեր, որոնք հրդեհի դէմ ապահով պատասպարաններ կը կարծուէին՝ աննշան ժամանակի մը մէջ աւերակ կը դառնան:

Պոլիս, հրդեհներու դասական քաղաքը, այսպիսի հրդեհ մը չէր տեսած: Եօթնագար շէնքեր աւերուելէ, անհաշուելի ընչից կորուստ պատճառելէ գտնուեց 5—600 հոգիի ալ մարդու կորուստ պատճառած էր¹⁰:

Հայերու կրած նիւթական մեծ ֆրասին մաս կը կազմէ նաեւ Ոսկեան ընտանիքի կորուստը. ընտանիքը գրեթէ իր ամբողջ ունեցածը կը կորսնցնէր: Բարեբախտաբար անձի կորուստ չկար: Արիստակէս Ոսկեան

հաւաքելով ընտանիքի անդամները՝ կ'անցնի Փրոթի կղզի, որուն զեղեցիկ բնութիւնը, ջինջ օդը եւ խաղաղաւէտ միայնութիւնը մոռցնել կու տան հրդեհի ազգած տարերային աւերները: Քիչ ատենէն ընտանիքը շրջապատուած կը դգայ կղզիի հայ եւ յոյն բնակչութեան սիրալիր եւ ազնիւ վերաբերումէն, ուր Արիստակէս Ոսկեան շուտով սիրուած ու փնտռուած անձ մը կը դառնայ:

Յաջորդ տարի Արիստակէս Ոսկեան իր անդրանիկ գաւակը, Գրիգոր, գիշերօթիկ կը դնէ Քաղկեդոնի Միսթարեան վարժարանը, իսկ 1874ին հարկ կը համարի Օրթագիւղ անցնել ընտանիքով՝ միւս գաւակներուն կրթութիւնն ալ ապահովելու համար: Հոս կար հայ կաթողիկէ Ս. Գրիգ. Լուսաւորիչ վարժարանը՝ Նախակրթարանի, Միջին եւ Երկրորդական ուսման ծրագրով: Վարժարանը ծաղկեալ շրջան մը կը բոլորէր նախ Դոկտ. Շիշմանեանի, յետոյ Դոկտ. Հէքիմեանի Խնամակալութեան օրով: Ընտանիքի երէցը կը դուրս երկրորդական բաժինը, իսկ 4 փոքրերը կը գետեղուին նախնական կարգերու մէջ:

1876ին Ոսկեան ընտանիքը կը գտնենք դարձեալ Փրոթի (Գնալը կղզի) փոխադրուած, որուն առողջարար օդը կազդոյր կը շնորհէր Օրթագիւղի խոնաւութենէն փրկուած ընտանիքի մօր: Կղզիի փոքրաթիւ Հայութիւնը թէեւ թաղային դպրոց մ'ունէր՝ սակայն ոչ մէկ կերպով կրնար գոհացնել ուսման ու կրթութեան ծարաւները: Հարկ կ'ըլլայ գոհանալ ներքին, սեփական ուսերով: Ընտանիքի անդրանիկը՝ Գրիգոր կը ստանձնէ փոքր եղբայրներու եւ քրոջ դաստիարակութեան գործը: Սենեակ մը կը յատկացուի դասարանի: Կը կազմուի ուսման ծրագիր մը եւ կանոնաւոր ժամանակացոյցի մը համեմատ կը սկսի դասընթացը:

Կղզիի հայ եւ յոյն բնակիչները մեծ համակրութեամբ կը դիտեն կաթողիկէ միակ ընտանիքի օրինակելի կեանքը, որուն զլուխը՝ Արիստակէս Ոսկեան՝ շատոնց սիրուած եւ փնտռուած անձ մըն էր իրենց համար: Այս համակրութիւնը կ'ընդարձակուի, երբ ամառնային շրջանին օդափոխութեան կու գան պոլսարանակ հայ ընտանիքներ, որոնք իրենց գաւակներու կրթութիւնը սիրով կը յանձնեն Ոսկեանց տնային դպրոցին, ուր աշակերտութեան թիւը կը բարձրանայ 30ի:

Փրոթի կղզին հայ կաթողիկէ եկեղեցի չգտնուելուն՝ Օրթագիւղի Անտոնեան Միա-

բանութենէն Հ. Գեորգ Սրապեան մերթնդմերթ այցելելով ու մէկերկու օր հիւր մնալով՝ թէ՛ պատարագ կը մատուցանէ եւ թէ՛ ընտանիքի բոլոր հոգեւոր պէտքերը կը մատակարարէ:

Անդորր, խաղաղ ու երջանիկ էր Ոսկեան ընտանեկան կեանքը՝ իր նիւթապէս համեստ, բայց բարոյապէս հարուստ ու բարձր վիճակովը: Ընտանիքի այս երջանկաւէտ կեանքը երկար ատեն շարունակուելու ամէն երաշխիք ունէր ու չկար պարագայ մը, որ կարենար խանդարել անոր ներդաշնակութիւնը:

Անցաւոր երկրիս վրայ ո՞ւր կայ սակայն մնայուն երջանկութիւն:

Թէեւ ընտանիքի մայրը կատարելապէս բուժուած՝ այս անգամ տան սիրելի հայրն էր որ սրտի անոզոք հիւանդութեան մը կը բռնուէր: Տարուան մ'ընթացքին դեղ ու դարման չէր մնացած որ չփորձուէր, բժշկ չէր մնացած որ չկանչուէր՝ փրկելու համար թանկազին կեանքը սիրելի հօր եւ ընտանիքի նեցուկին: Ամէն բան կ'անցնի ի դուր. 1879 Դեկտ. 13ին Արիստակէս Ոսկեան վերջին հրաժեշտը տուած էր իր ընտանիքին ու բաժնուած այս կեանքէն:

Իրենց վշտակցութիւնը յայտնելու եկող կղզիի բնակչութեան մէջ առաջինը կ'ըլլայ Հայ եկեղեցիի թաղականութիւնը, որ ազնիւ գտնուելով՝ կ'առաջարկէ որ փոխանակ մեռելը ձիւնաբերի մինչեւ Բերա փոխադրելու՝ հայ կաթողիկէ քահանայի ձեռք կղզիի հայ գերեզմանատունը թաղուի, ուր իրենք սիրով գետին կը տրամադրեն: Մեծ սուգի մէջ փոքրիկ սփոփանք մը չէր ասիկա նիւթապէս ալ աննախանձելի վիճակ ունեցող ընտանիքին համար:

Շնորհակալութեամբ կ'ընդունի Արիստակէսի այրին Հայ թաղականութեան այս ազնիւ առաջարկը: Կը կանչուի Ղալաթիոյ Ս. Փրկիչ Մայր-եկեղեցւոյ Մեծաւոր-ժողովրդապետ Հ. Անտոն Զօհրապեան: Զօհրապեան՝ քահանայի մը, չորս դպիրներու եւ դպրապետի մը հետ կը հասնի կղզի եւ Դեկտ. 14ի յետմիջօրէին տեղի կ'ունենայ թաղման յուղարկուողութիւնը՝ կղզիի հայ եւ յոյն բնակչութեան մասնակցութեամբ:

1887ին Գրիգոր Ոսկեան մարմորէ շիրիմ մը կը կանգնէ հօր գերեզմանին վրայ՝ արձանագրելով տոգերս:

Աստ հանգչի
Արիստակէս Էֆ. Ոսկեան
ծնեալ ի 26 Սեպտ. 1830
ի Տէր հանգուցեալ
ի 13 Դեկտ. 1879

Սրտաբույժ օրինութեամբ
Յիշեցնեմ անմոռաց
Կողակիցն յաւերժ ի սուգ
Զաւակունքն երախտագէտք

Արիստակէս Ոսկեան ըլլալով Մաքսային վերատեսչութեան Ընդհ. Քննիչ՝ Պետութենէն թոշակ կը կապուի իր այրին եւ 5 գաւակներուն, որոնցմէ իւրաքանչիւրը կը ստանայ ամսական 110 դահեկան:

Սգաւոր ընտանիքը մասամբ նիւթապէս բաւարարուած՝ կը սկսի շարունակել նախկին սովորական ընթացքը. Գրիգորի վարչութեան տակ դպրոցը կանոնաւոր վարժարանի մը բոլոր պահանջները կը լրացնէ:

1883ին Գրիգոր Ոսկեան կը հրատարակէ «Լոյս» անունով Ձեռագիր ընտանեկան թերթ մը:

1885ին սկիզբը Գրիգոր պետական պաշտօնի կոչուելով՝ կը ստիպուի ցորեկները բացակայել ընտանիքէն: Այս միջոցին եղբայրները կը շարունակեն իր սկսած գործը: Յարութիւն, Կարապետ եւ Յովհաննէս 1885ի ընթացքին կը սկսին հրատարակել Ձեռագիր հանդէս մը՝ «Ծագիկ», որուն Գրիգոր ալ կ'աշխատակցի:

Փրոթի, ուր սահած էին մանկութեան ու պատանեկութեան տարիները Արիստակէս Ոսկեանի 7 գաւակներուն՝ ա՛յլ նեղ կու գար անոնց: Նորափետուր թոշուներու պէս կը փափագէին դուրս սլանալ իրենց բոյնէն ու Ընկերութեան մէջ մտնելով ապրիլ իրրեւ քաղաքացիներ: Գատըգիւղի մէջ տուն մը վարձելէ վերջ՝ 1886 Նոյ. 6ին հրաժեշտ կու տան սիրելի հօր շիրմին ու կղզեցիներուն եւ կը մեկնին Գատըգիւղի իրենց նոր բնակարանը:

Ե. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՈՍԿԵԱՆԻ ՍԵՐՈՒՆՈՂ

Պոլսոյ Հայ Կաթ. Պատրիարքական Դիւանէն ստացած մեր տեղեկութեանց համեմատ՝ Արիստակէս եւ Մարիոնդա ունեցած են եօթը գաւակ, մինչ «Մտի ժամեր» գրքի (էջ 10 ծանօթ.) եւ Ոսկեան նոր սերունդի համեմատ՝ անոնք ունեցած են տասնուերեք գաւակ,

⁹ Մտի ժամեր, անդ եւ Ձեռագիր Գրիգոր Ոսկեանի:
¹⁰ Մասիս, Կ. Պ. 1870, թ. 976:

գրողը գլխու պտոյտ պատճառելու աստիճան խունկ ու մոմ կը ծխեն իրարու... առանց տեղեկութիւն ունենալու իր հիւանդութենէն, նամակ մը կ'ուղղէի իրեն, հարցնելու համար թէ ինչո՞ւ չի շարունակեր իր աշխատակցութիւնը Մասիսին, ուր ամիսներէ ի վեր չէր երեւցած իր անունը: Պատասխանը ստացայ քանի մը օր վերջ, կապար գրելով ու դողդոջուն մատներով գրուած, անկողինի մէջէն...: Իր հիւանդարոյր նամակին հետ զրկած ոտանաւորը Պատրանքն էր, մահաբոյր քերթուածիկ մը, զոր այսօր իր դոցուած գերեզմանին առջեւ կարելի չէ անգամ մըն ալ կարդալ ու չարտասուել:

Հիւանդ պառկած եմ տենդահար
Լեցուն ճակատըս քրքտինքով.
Յաւերու կրակ անկողինի քով
Կը հըսկէ դէմք մը չոր, նիհար:

Ձեռք մը ջրղուտ, ատեն ատեն
Կը սեղմէ ձեռքըս սոչորող
Մարմինս ամբողջ կը ցնցէ դող,
Եւ ցընորք միտքըս կը պատեն:

«Նե՛ղճ Ոսկեան: Դեռ անցեալ տարի, այս ատեն, առողջ ու կայտառ, ամառնային արձակուրդէ մը օգտուելով, խմբագրատուն այցելեց — առանց գիտնալու թէ վերջին արձակուրդն էր, զոր կը վայելէր ու վերջին այցելութիւնն էր, զոր կու տար մեզի...: Այն օրերուն Դաւիթ Սարգիսեանին որբերը ու այրին հանրային կարեկցութեան առարկայ դարձած էին, եւ Ոսկեան, ինքնաբերաբար ազնիւ մտածումով մը՝ տունէ տուն պատելով Գառըզիւղ, գումար մը հաւաքած ու բերած էր, որ Արեւելի Տնօրէնութեան միջոցաւ յանձնուեցաւ իր տեղը: Առանց ճանչցած ըլլալու այդ գաւառացի պատուական ուսուցիչը, խորունկ գառնութիւն մը զգացած էր անոր մահը իմանալով, եւ ուզած էր բան մըն ալ ինքը ընել»¹³:

Սմբատ Գաւթեան Արեւելի մէջ հետեւեալ տողերը նուիրած է.

«Ձորեքշաբթի, 13 Յունիս, սեւ հողին յանձնեցինք Կ. Ոսկեանը, այնպիսի տարիքի մը մէջ, ուր կեանքն այն ինչ կը սկսի բեղմնաւորիլ: Որքան իր մատուցած հասակը, այնքան ալ իր ընտիր ձիրքերն են որ շատերուն սիրտը արիւնտոցին՝ կեանքի սեմէն այսքան տա-

րաժամ անցնելուն համար: Լոյս՝ իր մօրկան աչքին, սիրակցորդ անդամ իր ազնիւ ընտանիքին, շատերուն բարեկամ թանկագին, պատուարեր անհատ համայնքին, սիրող ու մշակող գրական անդին, Կարապետ Ոսկեան այս ամէնը կարօտի մէջ թողուց եւ ամէնուն կարօտով բաժնուեցաւ առ յաւէտ: Ասոր համար էր որ սրտազեղ մեծարանքով ու թախծուն սրտով հետեւեցանք իր դազողին ու ազգին ամէն դասակարգէն պատիւներ ու պատիւներ ընծայուեցան իր քաղցրիկ յիշատակին... ամէն տուն սուգ առած էր կարծես ու ամէն սրբավայրեր իրենց զանգակներու զօղանջով անձնիւր թաղի եւ հասարակութեան վշտակիր զգացումներուն կ'ըլլային թարգման: Զի ամէնքը բարեկամ ու համակիր են Ոսկեան ընտանիքին, անոր մէջ տեսնելով նախանձի օրինակ մը եղբայրական միաբանութեան. զի ամէնքը գովասանք մը ունեցած են միշտ իրենց շրթունքին վրայ, տեսնելով այդ բազմանդամ բարեկիրք ու ազնիւ գերդաստանին եօթնեակ գաւկըները, սիրակցորդ եղբայրները, որ միեւնոյն յարկին տակ, միասիրտ, միամիտ՝ կ'ըմբռնէին խաղաղիկ կեանքի մը վայելքը, զոր ահա կը դառնացնէ, աւա՛ղ, այս անդամանելի, անմոռանալի կորուստը, Գրական, գեղարուեստական տաղանդով ու ձիրքերով օժտուած եօթը հարազատներ, իրենց հմտութեան ու լեզուագիտութեան չափ, բարեբարոյ կեանքով ալ ամէնուն մեծարանքին եղած են արժանի»¹⁴:

Կարապետ Ոսկեան 1885էն սկսած աշխատակցած է հայերէն թերթերու արձակ եւ ոտանաւոր գրութիւններով: Իր արձակները լոյս տեսած են Արեւելի մէջ, իսկ ոտանաւոր բանաստեղծութիւնները՝ հետեւեալ թերթերու մէջ. Բուրաստան Մանկանց, Երկրագունտ, Բագմալէպ, Ծաղիկ Մանկանց, Պատկեր Հանդէս Կիսամետայ, Մասիս Շաբաթաբերք, Պատկեր Աշխարհիկ Գրականութեան, Բիւրակն:

Կարապետ Ոսկեանի հարազատ Գրիգոր Ոսկեան, յաւերժացնելու համար եղբոր յիշատակը՝ կը հաւաքէ անոր հրատարակած բանաստեղծութիւնները՝ միացնելով անոնց անտիպներ ալ եւ 1911ին հատորով մը լոյս կը հանէ «Սրտի Ժամեր» անունով: Այս հրա-

¹³ Արեւելի, Կ. Պ. 1901, թ. 4665: — Տես նաև Մէնս. Ա. Սպար, 1901, թ. 3841. Ճէրիտիէ Եարգիյէ, 1901, թ. 4867. Բագմալէպ, 1901, Յունիս. Արեւելիս Մամուլ, 1901 Յունիս:

¹⁴ Մասիս Շաբաթաբերք, Կ. Պ. 1901, թ. 374:

տարակութեան Յառաջարանը կը գրէ Սիպիլ, իսկ Կարապետ Ոսկեանի «Կենսագրական ծանօթութիւնք»ը՝ Գրիգոր Ոսկեանի կցելով այս գեղեցիկ գործին Կարապետ Ոսկեանի (էջ 8) եւ իրենց հանգուցեալ մօր (էջ 184) լուսատիպ պատկերները: Գրքիս հրատարակութեան ծախքը նուիրած է Յովհաննէս Պալեանի՝ միջնորդութեամբ Է. Թովմաս Վ. Կէտիկեանի, որ մտերիմն եղած է Ոսկեանց:

Կարապետ Ոսկեանի Գերթուածներէն կրնայինք նմոյշներ ընծայել մեր ընթերցողներուն՝ դադարաւ մը կազմելու համար անոր արուեստի մասին, սակայն լաւագոյն կը համարինք յառաջ բերել հատուածներ Սիպիլի Յառաջարանէն, որով երկու տաղանդ — արուեստագէտներ մէկէն ներկայացուցած կ'ըլլանք:

Սիպիլ կը գրէ. «Հակառակ այն բնական երեւոյթին՝ որ վաղամեռիկ բանաստեղծին տաղերը բոլորովին մարդկային են, հակառակ այն հազուագիւտ պարագային՝ որ կարմիր, կանանչ պենկալեան հուրեր չի վառեր ան՝ մոգական շքեղութիւն մը տալու համար ան՝ տաղերուն, ես սովորականէն տարբեր վերտաղերուն, ես սովորականէն հանդէպ, ճակ մը կը զգամ այդ քերթուածին հանդէպ, ազաւնիներու թեւաբախում մը կարծես, ձիւնի սաւառնում մը շուրջս, անհուն, անհաստնում, անձիւր ճերմակութիւններ, որոնց տարապայման աննւթականութեան ներքեւ ճշունտ կը զգամ ինքզինքս մեր արդի գրական միջավայրին մէջ: ... Իր երեւակայութիւնը ոսկեցնող հրաշալիքներու մէջ չի թուր յարկանքներ, հասարակութեան խօզինքը չի զբաղեցնէր, հասարակութեան խօզինքը չի զբաղեցնէր, հասարակութեան խօզինքը չի զբաղեցնէր, տաղեր հիւսելու համար բառ չի փնտռեր, տաղեր հիւսելու համար յանգ չի պատրաստեր: Իր սերուն համար յանգ չի ներդաշնակութեան, ուրկէ կը ցայտեն բիւրեղէ պրիսմակութեան, ուրկէ կը ցայտեն բիւրեղէ պրիսմակութեան, որ քերտերուն ջրնը պայծառութիւններ...: Իր քերտերուն մեղմադճութիւն մը կ'արտահայտէ, որ կը համակուխ միջնեւ սրտիկ խորը. —

Այս աւերեալ իմ հոգւոյս մէջ
Ուր շունչ մ'անդօր հազիւ մնաց,
Կենաց, սիրոյ, փափաքանաց
Դեռ կը վառի հրդեհն անչէջ:

... որքա՛ն համակերպող եւ անոյշ մեղամաղճութիւն սա պարզ տողերուն մէջ:

Յոգնած եմ, յոգնած այս երկայն ճամբէն
Ուր ցընորք անփորձ սիրտը կը խաբեն,
Ուր վարդը կանուխ կ'իշխայ կը թոռմի,
Ուր մարդը մարդուն կ'ըլլայ թշնամի:

... Գիւտի, զգացման, յօրինումի փոքրիկ հրաշակերտ մըն է Գաղտնիքը... այս տաղը միայն բաւական էր իր անունը անմոռանալի ընելու մեզի՝ որ յափրացած, յոգնած ենք այնքան՝ արեւելքէն արեւմուտք, հիւսիսէն հարաւ քերթողներ փնտռելով, գտնելու համար նորը եւ գեղեցիկը:

... Թերեւս տարօրինակ երեւոյ ծանօթներուս իմ համակրանքս, բանաստեղծին շատ պարզ ոճը եւ փոքրիկ բառարանը նկատողութեան առնելով, երբ անձնական ճաշակիս մէջ, նուազ սակաւապէտ եղած եմ ես. ո՞չ ապաքէն յաւիտենական դժգոհն է մարդ եւ իր չունեցածը կը փնտռէ. յետոյ, կատարեալը պարզ է, եւ պարզութեան մէջ գեղեցիկը գտնելը՝ շատ հազուադէպ անակնկալ մը»¹⁵:

4. Տիրուհի. — Արիստակէս Ոսկեանի միակ դուստրը՝ Տիրուհի ծնած է 1867ին: Ազնիւ կրթութիւն մը ստանալով եղած է շնորհալի անձնաւորութիւն մը: Հակառակ շատ մը պատուաւոր խնդրանքներու՝ չէ ուզած ամուսնանալ: Գրիգոր Ոսկեանի տիկնոջ վաղաժամ մահէն վերջ՝ մայրագործ խնամքով մեծցուցած է անոր զաւակները՝ բարեկրթութեան ու առաքինութեան կենդանի օրինակ մ'ըլլալով անոնց: 1928էն վերջ մեկնած է Պարիս՝ Գրիգոր Ոսկեանի գաւակներուն քով, ուր 1952 Դեկտ. 13ին կը վախճանի 85 տարեկան:

5. Յովհաննէս. — Ծնած է 1868ին: Նախնական ուսումը Ս. Գրիգ. Լուսաւորչեան վարժարանը եւ ընտանեկան յարկին տակ ստանալէ վերջ՝ փափաքած է հետեւիլ բժշկութեան: Գրիգ. Ոսկեան կը յաջողի տեղաւորել զինքը Քաղաքային Բժշկական Վարժարանը: Բժշկական վկայականը կը ստանայ փայլուն քննութեամբ: Իբրեւ խղճամիտ, քաջ եւ բարեհամբաւ բժիշկ մեծ անուն կը հանէ եւ ամէն կողմէ կը փնտռուի: Կը հաստատուի որ ազբաններու հիւանդները ոչ միայն ճրի կը դարմանէր, այլ եւ անոնց զեղերն ալ ինքը կը հայթայթէր զազանաբար:

Թուրք փաշա մը, որ զինքը իր տան բժիշկն ըրած էր՝ դէպի Ափրիկէ ըրած ճամ-

¹⁵ Սրտի Ժամեր, էջ 5—7:

բորգուժեան մը միջոցին չուզելով զրկուել անոր խնամքներէն՝ հետը կը տանի: Հոն Դոկտ. Յովհաննէս մալարիայի բռնուելով՝ 1904ին Հոգէյրայի մէջ կը վախճանի 36 տարեկան:

Դոկտ. Յովհ. Ոսկեան ամուրի էր: Գրականութեան մէջ բանաստեղծութեան ճիւղը սիրած էր: Թողած է ձեռագիր քերթուածներ:

6. Պետրոս. — Արիստակէս Ոսկեանի կրտսեր զաւակը՝ Պետրոս Փրոթի ծնած է 1873ին: Մօտայի Մխիթարեան վարժարանի շրջանը աւարտելէ յետոյ՝ Մուրատ-Ռափայէլեան զրկուած է, ուր հինգ տարի Գեղարուեստից Ակադեմիա յաճախելով կը ստանայ ճարտարագետական առաջնակարգ վկայագիր մը (Professorat):

Պետրոս Իտալիայէն կ'անցնի Եուզոսլաւիա եւ բնակութիւնը կը հաստատէ Ռազուզա: Քաղաքագետութիւնը զինքը կ'անուանէ առաջին ճարտարագետ: 1944էն ի վեր որեւէ լուր չէ առնուած իրմէ:

Զ. ԳՐԻԳՈՐ ՈՍԿԵԱՆ

Գրիգոր Ոսկեան՝ Արիստակէս Ոսկեանի անդրանիկը՝ է նաեւ ամբողջ Գերգաստանի փայլուն աստղը: Բնականէն օժտուած անձնական բարձր ձիրքերով, միացած բացառիկ աշխատասիրութեամբ՝ ան ձեռք բերած էր հանրային կեանքի մէջ զիրք մը՝ որ իրաւամբ մեծանուն անձերու շարքը կը դասէ զինքը: Ճշմարիտ մեծութիւնը, ինչպէս միշտ, հոս ալ համեստ եղած է սակայն: Ան չէ փնտռած փառք ու պատիւ: Զանազան է միայն իր պաշտօնական գիրքովը օգտակար ըլլալ ամէնուն, մանաւանդ իր ազգակիցներուն: Յաւալի է որ ժամանակակից հայ գրականութիւնը ոչ մէկ պարտականութիւն զգացած է գոնէ քանի մը տող նուիրել իր ազգասէր գործունէութեան: Այսօր երբ կը փորձենք ստուերագիր մը տալ իր կեանքի եւ գործի մասին՝ ի զուր կը փնտռենք գրական որեւէ յիշատակութիւն իր մասին ժամանակակիցներէն:

Ծնունդ եւ ուսում

Գրիգոր Ոսկեան ծնած է Պոլիս 1860 Ապրիլ 10ին (ըստ Պատրիարքական Դիւանի՝ 1861ին): 1871ի ամառը գիշերօթիկ աշակերտ գրուած է Քաղկեդոնի Մխիթարեան Միջին

եւ Երկրորդական ծրագրով վարժարանի մէջ, ուր կրցած է երկու տարեշրջան բոլորել նախ Հ. Վարդան Շիշմանեանի, յետոյ Հ. Մանուէլ Քաջունիի վերատեսչութեան օրով: 1875ին կը մտնէ Օրթադիւղի Լուսաւորչեան Հայ Կաթողիկէ Երկրորդական վարժարանը: 1876ին կը ստիպուի ընդհատել դպրոցական կանոնաւոր ընթացքը՝ ընտանիքին հետ փոխադրուելով Փրոթի (Հայ կղզի): Հոս առանձին կը շարունակէ աշխատիլ եւ ինքնազարգացումով յառաջանալ: Միեւնոյն ժամանակ կը ստանձնէ իր փոքր եղբայրներու դաստիարակութեան եւ ուսման գործը:

Գնալը կղզիի փոքրիկ Հայութեան ունեցած թաղային դպրոցը կը նկարագրուի այդ ատեն շատ անդհացողիչ վիճակի մէջ, առանց պատրաստուած ուսուցիչի եւ ուսման ծրագրի ու կանոնաւորութեան:

Գրիգոր Ոսկեան, թէեւ տակաւին պատանի, իրենց վարձու բռնած տան մէկ սրահը դպրոցի կը յատկացնէ ամէն հարկաւոր ու կարեւոր պիտոյքներով. կը շինէ ուսումնական ծրագիր մը. կանոնաւոր դասացուցակ մը ուղեցոյց ունենալով կը սկսի կանոնաւոր դասաւանդութեան մը նախ իր եղբայրներուն ու քրոջը: Յետոյ կղզեբնակ հայ տղաքներու ալ, որոնց ծնողք սիրով կը յանձնեն զիրենք Գրիգորի դաստիարակութեան: Հետզհետէ կ'աճի Գրիգոր Ոսկեանի վարած դպրոցի աշակերտներու թիւը: Ամառնային օգափոխութեան եկող Հայեր հիացումով կը տեսնեն Գրիգորի օրինակելի դպրոցին տուած դեղեցիկ արդիւնքը եւ ընդհանուր գոհունակութիւնը: Իրենք ալ կը խնդրեն իրենց զաւակներու ընդունելութիւնը նոյն դպրոցի մէջ մասնաւոր վճարումով: Որով Գրիգորի դպրոցը կ'ունենայ 25—30 աշակերտներու ոչ աննշան թիւ մը եւ կը դառնայ խիստական օրինաւոր դպրոց մը, ուր կ'աւանդուին Կրօնագիտութիւն, Հայերէն (գրաբար եւ աշխարհաբար), Թրքերէն, Փրանսերէն, Անգլիերէն, Պատմութիւն (Ս. Գրոց, Ազգային եւ Ընդհանուր), Աշխարհագրութիւն (բնական, քաղաքական եւ առեւտրական), Թուարանութիւն, Երկրաչափութիւն եւ Բնագիտութիւն: Գրիգոր Ոսկեան իր դպրոցը կը կոչէ «Հայկական Կրթարան»:

Բացի այս դպրոցէն՝ Գրիգոր Ոսկեան շարաթը երկու անգամ դասաւանդութիւն կ'ընէ նաեւ տներու մէջ աւելի մեծ մանչերու եւ աղջիկներու:

Հայ-կղզիէն դատ Մեծ-կղզիի Հայերն ալ զինքը կը հրաւիրեն դասաւանդութեան իրենց զաւակաց: Շարաթը երկու անգամ ալ հոն դասի կ'երթայ երկու ընտանիքներու տները:

Հայ-կղզիի տնային դպրոցը կը շարունակուի մինչեւ 1884 — մօտ 8 տարի — երբ Գրիգոր Ոսկեան պաշտօնի կը կոչուի Կրթական Նախարարութեան:

Պետական Պաշտօնեայ

1884ի վերջերը Կրթական Նախարարութիւնը Գրիգոր Ոսկեանի կը յանձնէ Մաքսատանց Գրաքննիչ պատուաւոր պաշտօնը, զոր կը վարէ նա երկար տարիներ զնահատուելով ու սիրուելով բոլորէն: Այս առթիւ շիւտեմներ ու ծանօթութիւններ կ'ունենայ ոչ միայն թուրք պետական անձինքներու, այլ եւ օտար զեսպանատուններու եւ հիւպատոսարաններու հետ:

1905ին կը կոչուի Հանրային Պարտուց Վարչութեան մէջ Ընդհ. Քննիչութեան Դիւանի պաշտօնին¹⁶, զոր կը վարէ երկու տարի: 1907ին կը բարձրանայ Ընդհ. Քննիչութեան Դիւանի թրքերէն ճիւղի Տեսչութեան, իրեն օգնական ունենալով Էմմանուէլ Պէշիրեան, Յովհ. Գրուանկըճեան, Թէոդոր Ալլահալէրեան, Գէորգ Գրուանկըճեան եւ Միքայէլ Նալպանդեան¹⁷:

Հաւանօրէն 1907ին է որ Գրիգոր Ոսկեան կ'անուանուի նաեւ Կրթական Նախարարութեան Գրաքննիչ Ժողովի անդամակցութեան¹⁸:


1909ին զինքը կը գտնենք Կրթական Նախարարութեան Մասնաւոր Վարժարանաց Ընդհ. Քննիչութեան պաշտօնին մէջ¹⁹:

1911 Մարտին կը գրէ ժամանակ. «Գրիգոր էֆ. Ոսկեան, Կրթական Նախարարութեան Ընդհանուր Քննիչը, անցեալ օր այցելեց Գատրդիւղ, Թորոսեան Մանկապարտէզ եւ Նախակրթարանը եւ աշակերտները քննելով խիստ գոհ մնաց անոնց յաջող պատասխաններէն: Ոսկեան էֆ. իր այցելութեան իրր յիշատակ՝ վարժարանին այցելուներուն տեսրակին մէջ արձանագրեց զնահատական տողեր իր այցելութեան արդիւնքին վրայ եւ խոստացաւ տեղեկագիր մը տալ Նախարար»:

¹⁶ Ընդ. Օրացոյց, 1906, էջ 322:
¹⁷ Անդ, 1908, էջ 168:
¹⁸ Անդ, էջ 166:
¹⁹ Ամսօրեայ Տեղեկատու Մուրատ-Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան, Կ. Պ. 1909, էջ 34:

րութեան, որպէս զի զնահատական գիր մը զրկուի յիշեալ վարժարանին տնօրէն Թորոս էֆ. իր այս ազգօրուտ ջանքերուն համար²⁰:

Գրիգոր Ոսկեան Պետութենէ Հանգստեան Թոշակ ստանալով հանդերձ՝ կը շարունակէ պաշտօնավարել Օսմանեան Դրամատան Ղա-



ԳՐԻԳՈՐ ՈՍԿԵԱՆ

լաթիոյ Կենդրոնին մէջ մինչեւ 1928, երբ զաւակներու կարօտէն մղուած՝ քրոջ հետ Պարիս կը մեկնի, ուր քանի մը տարի է վեր կը գտնուէին իր զաւակները:

Կը ներկայացնենք Գրիգոր Ոսկեանի մէկ նկարը, զոր ազնուօրէն տրամադրեց մեզ իր դուստրը՝ Քոյր Ազատուհի Ոսկեան (Հոռմ): Ինչպէս կը տեսնուի՝ բազմաթիւ պատուանշաններ կը զարդարեն Ոսկեանի կուրծքը: Այդ պատուանշանները ստացած է ան իր պետական պաշտօնավարութեան ընթացքին ո'չ միայն թուրք, այլ եւ օտար պետութիւններէ,

²⁰ Ժամանակ, Կ. Պ. 1911, Թ. 742:

որոնց առաջինը եւ մեծագոյնն է Հոռմայ Ս. Աթոռէն ստացածը:

Իրենց կարգին համեմատ այդ պատուանշաններն են. 1. Commandeur de St. Grégoire le Grand, 2. Chevalier de St. Sylvestre, 3. Officier d'Académie (Palme académiques), 4. Officier de l'Instruction Publique, 5. Շխրուխուրշիտ (Պարսից), 6. Մէծիտիէ Դ.: 7. Լիաքատի արծաթ շքադրամ²¹:

Գրիգոր Ոսկեան Սանիէի աստիճան ունէր:

Ազգային Գործիչ

Գրիգոր Ոսկեանի Ազգային գործունէութենէն յիշենք հետեւեալները. Նախ Հայ Կաթողիկէ Համայնքի Երեսփոխանական Ժողովի²², յետոյ Վարչական Ժողովի Քարտուղարութեան պաշտօն վարած եւ եղած է Ազգ. Երեսփոխան²³: Կ'ընտրուի Անդամ Ազգ. Վարչական Ժողովի²⁴, որուն Ատենապետութեան կը բարձրանայ յետոյ:

Վերջին հանգամանքով կը մասնակցի 1919ի Պոլսոյ Համագային Համագումարին, որուն պատմական նիստը անմոռանալի պիտի մնայ Հայ Տարեգրութեանց մէջ իրրեւ ամենացայտուն ապացոյցը ազգային համերաշխութեան:

Երկու խօսքով բացատրենք նպատակը այդ Համագումարին:

Հակառակ 1915ի ահռելի դէպքերուն մեր տուած զոհերուն, հակառակ ազգային դիպրահանական մարտնչուններով (1915—1918) ձեռք բերուած առաւելութիւններուն՝ 1919ին տակաւին դամոկրեան սուրը կախուած էր գաւառներու մէջ մնացորդ Հայ խլեակներու գլխուն վերեւ եւ կը սպառնար ընդհանր վերջին Հայ մնացորդները: Համագային այդ վտանգին առջեւ միացած էր ամբողջ Հայութիւնը եւ դարձան կը խորհէր փրկութեան: Ահա նպատակը Համագումարին:

1919 Յունիս 16/29ին Ղալաթիոյ Ազգ. Խորհրդարանի սրահին մէջ տեղի կ'ունենայ Համագումարի պատմական նիստը: Ազգային Համագումարին Հայ Կաթողիկէներէն կը մասնակցին 18 եկեղեցական եւ աշխարհական Երեսփոխաններ, Հայ Բողոքականներէն՝ Ընդհանուր Ժողովի 5 անդամներ, իսկ Լուսաւոր-

չականներէն 57 եկեղեցական եւ աշխարհական Երեսփոխաններ: Ժողովին կը նախագահեն Զաւէն Պատրիարք, Հայ Կաթողիկէ Պատր. Փոխանորդ Սայեղեան Արքեպիսկոպոս եւ Հայ Բողոքականաց Ազգայեան Պրոֆ. Պէզճեան: Ժողովին Ատենապետներն են երեք Յարանուանութեանց Ազգ. Ժողովներու Ատենապետները՝ Պ. Փափագեան, Գրիգոր Ոսկեան եւ Թումաճանեան: Իսկ Ատենապարի պաշտօնը կը վարէ Կոպեռնիկ Խաչատուրեան: Համագումարին ներկայ են, ուրեմն, երեք Յարանուանութեանց պատկանող կրօնական եւ աշխարհական 80 ժողովականներ, ինչպէս նաեւ Մամուլի, Ազգ. Միութիւններու, Կուսակցութեանց ներկայացուցիչներ եւ խումբ բաղմութիւն:

Տեղիս չէ Համագումարի ամբողջ դործունէութիւնը ներկայացնել: Բայց պիտի յիշենք մեծահռչակ Հայ Փաստարան՝ Հմայեակ Խոսրովեանի այդտեղ արտասանած հրաշալի ճառին սա խօսքերը միայն, որոնք իրենց մէջ շատ բան կը խտացնեն արդէն. «... մենք տկար չենք: Ո՛չ, հերոս ազգ մը տկար չ'ըլլաք: Մանաւանդ այս վայրկեանիս, երբ կը տեսնեմ երեք Յարանուանութեանց Պետերուն ու Ժողովականներուն այս միութիւնը, որ ամբողջ ազգը ունի իր ետեւ, կը կրկնեմ թէ տկար չենք մենք: Այս միութիւնը ամէն ատենէ աւելի ուժով կ'ընէ մեզ...»²⁵:

Գրիգոր Ոսկեանի Վարչական Ժողովի Ատենապետութիւնը, եթէ չենք սխալիր, տեւած է քանի մը տարի:

Ուսուցչական ասպարէզի վրայ

Գրիգոր Ոսկեանի կեանքին մէջ կարեւոր տեղ գրաւած է ուսուցչական ասպարէզը: Արդէն պատանեկան հասակէն նուիրուած էր ան իր փոքր եղբայրներու կրթութեան եւ ուսման գործին: Ընտանեկան յարկի մէկ անկիւնը փոքրիկ, բայց օրինակելի կարգուսարքով դպրոցի մը վերածած էր, որուն համբաւէն հրապուրուած՝ շատ մը պոլսեցի Հայ ընտանիքներ անգամ իրենց զաւակներու դաստիարակութիւնը իրեն վստահած էին:

Յաջորդ տարիներու մէջ դասախօսած է Օրթագիւղի Ս. Գրիգ. Լուսաւորչեան Ուսումնարանի, Մխիթարեան եւ Պետական վարժարաններու մէջ: Յատկապէս յիշելու

²¹ Տե՛ս Ամսօրեայ Տեղեկատու, անդ:
²² Ժամանակ, 1909, թ. 353:
²³ Ամսօրեայ Տեղեկատու, անդ՝ էջ 34:
²⁴ Անդ:

²⁵ Տե՛ս Ժամանակ, 1919, թ. 3559—3560:

ենք իր ուսուցչութիւնը Կալաթա-Սարայի Կայսերական Լիկէնի մէջ²⁶:

Ձեռագիր իր մէկ գրութեան մէջ խօսելով իրենց տնային դպրոցի մասին՝ կը գրէ Գրիգոր Ոսկեան 1932ին. «... յաջողած էի, կարողութեանս չափով, եղբայրներս կրթել եւ զիրենք մտաւորապէս ըստ բաւականի զարգացնել: Պէտք է սակայն խոստովանեմ թէ անոնք առաջին օրէն միշտ հանդարտ, արթնամիտ եւ ուսումնասէր ըլլալով՝ իրենց կողմանէ խրախոյս տուած եւ դիւրութիւն ընծայած են ինձ, սիրով եւ անվհատ կատարելու իմ ստանձնած Մենտորի պաշտօնս: Եւ այսօր կրնամ բացարձակապէս յայտարարել թէ իմ մերձաւորապէս յիսնամեայ այցելու ուսուցչական շրջանիս մէջ ունեցած քե՛զիս եւ քե՛զիս օտարագրի հարիւրաւոր աշակերտներէս փիչեր տեսած եմ իմ եղբայրներուս նմանող»:

Գրականութեան սիրող

Հակառակ անոր որ գրականութիւնը շատ սիրած եւ արտադրելու ձիրք ունեցած է Գրիգոր Ոսկեան՝ կարող չէ եղած անոր նուիրելու եւ արտադրելու: Հօր տարածած մահէն յետոյ, իրրեւ տան անդրանիկը, երկտասարդ հասակէն իր վրայ ծանրացած ըլլալով բաղմանդամ ընտանիքի նիւթական հողան ստիպուած էր իր աշխատանքովը ոչ միայն ընտանիքի պիտոյքն հոգալ, այլ եւ եղբայրներու կրթութեան հոգն ստանձնել: Իր բազմազան կեանքին սակաւ ազատ վայրկեանները սակայն դարձեալ գրականութեան նուիրելու հաճոյքն ունեցած է: Գիտենք թէ 1883—1884ին ձեռագիր «Լոյս» ամսօրեայ թերթը հրատարակած է: Դադալիար մը տալու համար այդ թերթի բովանդակութեան վրայ՝ յիշենք քանի մը նիւթերու խորագրերն են. Ընտանիք, Պատանեակ եւ Վարդ, Աս սիրեցեալ մայրն իմ, Եղբայր եւ քոյր, Ի յիշատակ սգալի մահուան հօր մերոյ, Ի ծնունդ Յիսուսի, Նոր տարի 1884, Փունջն իմ, Ձայն խղճի, Բարեգործութիւն, եւ այլն:

Գրիգոր Ոսկեան ունի նաեւ արձակ եւ ոտանաւոր անտիպ գրութիւններ: Անգղիերէնէ թարգմանած է Լորդ Էյլիւրի «Կեանքի գործածութիւնը»: Փրանսերէնէ՝ Դը Լամբէր Մարկիզուհույն «Որտեք առ դուստրն իւր Դաստիարակութիւն աղջկանց», ինչպէս

²⁶ Ամսօրեայ Տեղեկատու, էջ 34:

նաեւ ուրիշ շատ մը թարգմանութիւններ, որոնցմէ միայն առաջինը սպազրուած է Կ. Պ. 1908ին:

Իր ջանքերովն է որ 1911ին լոյս կը տեսնեն եղբորը՝ Կարապետ Ոսկեանի Քերթուածները «Սրտի Ժամեր», որուն մէջ կը գեղու իր սրտին յորդարուի գգած ու մեքեր եղբոր եւ ընտանիքի միւս անդամներուն հանդէպ:

Ընտանեկան կեանք

1893 Փետրուարին մօտ 33 տարեկան էր արդէն Գրիգոր Ոսկեան, երբ մասամբ թեթեւցած ծանրահոգ գրողու մեքերէ՝ կը խնդրէ ձեռքը Օր. Եօժէնի Սուքեանի (Պրուսացի): Այս ամուսնութիւնը կ'օրհնուի 8 զաւակներով: Առջինեկը մանչուկ մ'եղած է, որ հագրու լոյս տեսած՝ թուած է երկինք: Մնացած 7 զաւակներն են. Մարիամ, Թերեզա, Լեւոն, Քրիստինէ, Լեւոն, Կարապետ եւ Յովհաննէս:

1. Մարիամ Անարատ Յղութեան Հայ Մայրապետներու քով ստանալէ վերջ իր կրթութիւնը՝ կանուխէն կ'ընտրէ կրօնաւորական վիճակը՝ մտնելու նոյն Միաբանութեան մէջ: Հայրը՝ հակառակ իր փափաքին՝ վայելելու իր անդրանիկին ներկայութիւնը՝ սիրով կը հաւանի որ նա մտնէ Անարատ Յղութեան Միաբանութեան մէջ: Գրիգոր Ոսկեան, կեանքի վերջին տարիներուն, ամենամեծ մխիթարութիւնն ու երջանկութիւնը զաւակներէն մին Աստուծոյ ընծայած ըլլալուն մէջ գտած էր:

Մարիամ վանք մտնելէ վերջ Ագատուհի անունն առած է եւ ներկայիս Հոռմ կը գտնուի:

2.—3. Թերեզա եւ Լեւոն 5 եւ 4 տարեկան՝ զոհ կ'երթան ջերմախտի (scarlatine): միեւնոյն շարթուան մէջ:

4. Քրիստինէ՝ 2 տարեկանին ուղեղա-տապէ (meningite) բռնուած՝ միւսներուն ետեւէն կը թուչի երկինք:

5.—7. Երեք սիրասուններու կորուստը կ'ամօքեն երեք նորածիններ. Լեւոն, Կարապետ եւ Յովհաննէս, որոնք իրենց ուսման ընթացքը Բանկալթիի Վիեննական Մխիթարեան վարժարանի մէջ կ'աւարտեն: Լեւոն եւ Յովհաննէս ամուսնացած եւ ներկայիս Պարիս կը գտնուին. իսկ Կարապետ՝ ամուսնանալէն եւ մանչ ու աղջիկ մը ունենալէ յետոյ, 1936ին, առոյգ հասակի մէջ կը վախճանի՝ ամխիթար թողլով այրին ու զաւակները, որոնք նոյնպէս Պարիս են այժմ:

Գրիգոր Ոսկեանի ամուսնական երջանկութիւնը կարճատեւ եղած է: Տիկ. Էօփէնի թարմ հասակի մէջ հրաժեշտ տուած է այս կեանքին: 1911 Մայիս 6ին սրտի հիւանդութիւն մը կը կտրէ իր կեանքին թելը:

Մահ

Քիչեր ունեցած են Գրիգոր Ոսկեանի անողջ եւ առողջ կազմը: Հիւանդութիւնը անձանօթ եղած է իր բովանդակ կեանքին մէջ: 69 տարեկան էր, երբ անակնկալ կերպով, 1929 Յունուարին, միակողմանի կաթուած մը կը զգտնէ զինքը, երկու ամիս մտահոգութիւն պատճառելով: Սակայն շնորհիւ իր առողջ կազմին՝ հետզհետէ կը բուժուի եւ կարող կ'ըլլայ ոտքի կանգնել, նոյն իսկ աշխատիլ: 1934 Յունուարին երկրորդ կաթուած մը լուրջ կը դարձնէ իր վիճակը: Մարտ 3ին ուժովյաճ Ս. Խորհուրդներով՝ կը թողու աքսորավայրս՝ շրջապատուած քրոջմէն, երեք մանչերէն, հարսերէն ու թոռնիկներէն:

Մարդը

Նկարագիրը՝ մարդն իսկ է, ըսուած է: Գրիգոր Ոսկեան տէր էր ուղիղ նկարագրի մը: Արդար, անչաճախնդիր, անկողմնակալ եւ միշտ ճշմարտախօս՝ առանց ակնառութեան ու մարդահաճութեան — ահա յատկութիւններ իր նկարագրին: Քրիստոնեայ մ'էր խոր համոզումով. կաթողիկէ մը՝ հաւատքը կեանքի վերածելով:

Օտարներու շրջանակին մէջ լուրջ եւ ծանրախոհ բնութիւնը՝ կը փոխուէր ընտանեկան յարկին տակ եւ բարեկամներու շրջանակին մէջ, ուր կը սիրէր խօսիլ, կատակել, խնդալ ու խնդալցնել՝ շէնչող մթնոլորտ մը ստեղծելով:

Նիւթական վիճակը թոյլ չէ տուած իրեն իր սրտին փափագին չափով ձեռնտուութիւն ընել կարօտեալներու. գիտցած է սակայն բարիք սփռել իր շուրջը՝ աղքատին ապրուստի միջոց, անտէրին օգնութիւն, որբին դաստիարակութիւն, հիւանդին ապաստանարան ձարելով՝ իր ազդու միջամտութեամբը:

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ՊԸՏՄՈՒԹԻՒՆ ԼԵԶԱՐԵԱՆ ՏՈՒՄԻ

ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

(ՊԸՏՄԵՎԿԵՆ ՈՒՐՈՒԵԿԻՏԻ)

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԵՈՍԵԱՆ

(Շարունակութիւն եւ վերջ):

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ՊԸՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԼԻԿԵՆԻ
ԿԱՄ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՂՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Երկու խօսք

Լազարեան ձեմարանի պատմութիւնը ամբողջացած չէր լինի, կիսակատար դործ կը լինէր, եթէ չներկայացնէինք համառօտակի նաեւ Լիկէոնի պատմութիւնը:

Այս աշխատանքի մէջ, սակայն, մենք չունինք ինքնուրոյն մաս. մենք ամփոփել ենք 1903 թուին Մոսկուայում լոյս տեսած ուսսերէն լեզուով հրատարակութիւնը՝ «Լազարեան ձեմարանի Մասնագիտական դասարանների 30ամեակը», որ նոյնպէս մի համառօտ Յիշատակարան է Լիկէոնի անցեալի եւ յորեկեանական ժամանակի վիճակի:

Մենք չգիտենք, կա՞յ արդեօք որեւէ այլ ուսումնասիրական աշխատանք Լիկէոնի մասին թէ՞ ոչ, բացի յիշեալից, սակայն ամենայն հաւանականութեամբ կարելի է ենթադրել որ նման աշխատանք գոյութիւն չունի, քանզի մեր բոլոր պրպտուսների ժամանակ տեղեկութիւններ առնել Լազարեան ձեմարանի մասին, մենք չենք հանդիպել որ եւ է ակնարկի կամ մատնանշումի այդպիսի մի դործի վրայ:

Թերեւս Լազարեան տոհմի եւ ձեմարանի արխիվում լինին նիւթեր Լիկէոնի մասին, որոնք անմատչելի են մեզ:

Կան մի քանի տեղեկութիւններ ձեմարանի 50ամեակին եւ 75ամեակին նուիրուած հրատարակութիւնների մէջ, որոնք վերաբերում են Լիկէոնի անցեալին եւ որոնք լիովին օգտագործուած են մեր ներկայ աշխատասիրութեան երկրորդ մասում:

1872 թ. դեկտեմբեր 16ին բարձրագոյն հրամանով հաստատուած Նոր Կանոնագրով Արեւելեան լեզուների դասաւանդութիւնը ձեմարանում վերջնականապէս դաւում է գիմնագիտական դասընթացից եւ ստանում միանգամայն անկախ կազմակերպութիւն, իր յատուկ ուսումնական ծրագրով, իր առանձին բիւջետով ու ներքին վարչութեամբ, այսուհանդերձ նա շարունակում է մնալ ձեմարանի ծոցում, նրանից անբաժան թէ իրաւականօրէն, թէ բարոյապէս ու նաեւ ենթակայ ձեմարանի բարձր վարչական կազմի հսկողութեան ու խնամքին:

Լիկէոնը այս կազմակերպութեամբ պահպանեց իր գոյութիւնը անփոփոխ մինչեւ 1918 թ., երբ ձեմարանի գոյութիւնը վերջ դատւ նոր քաղաքական-պետական կեանքի ստեղծումով ամբողջ Ռուսաստանում:

Որո՞նք էին այս Նոր Կանոնագրի պիտանք հիմունքները. ի՞նչ բարեփոխութիւններ էին մտցրուած ձեմարանի կրթական ծրագրի մէջ:

Առաջին եւ ամենաէական բարեփոխութիւնը կայանում էր նրա մէջ, որ արեւելեան լեզուների դասաւանդութիւնը վերջնականապէս գատուում էր ձեմարանի գիմնագիտական դասընթացից եւ կեմտրոնացում էր յատուկ Մասնագիտական դասարաններում կամ Լիկէոնում, որը կազմելով ձեմարանի անբաժան մասը, եմքարկուած ձեմարանի վերատեսչութեան, ստանում էր իր ներքին կեանքի մէջ ինքնավար կազմակերպութիւն. նա պիտի կառավարուէր յատուկ խորհուրդով, նախագահութեամբ ձեմարանի վերատեսչի (գերեկտոր), մասնակցութեամբ ձեմարանի տեսչի, Լիկէոնի պրոֆեսորների ու դասախօսների:

Այս ինքնավարութիւնը, թէեւ չափաւոր սահմաններում գծուած, անհրաժեշտ էր արեւելեան լեզուների դասաւանդութեան բնականոն զարգացման համար:

Այսպիսով, Լազարեան ձեմարանը արեւելեան լեզուաց պարփակում էր իր մէջ երկու կրթական հաստատութիւններ՝ գիմնագիտական բաժին իր յատուկ ուսումն. ծրագրով, սահմանուած Կայսրութեան բոլոր գիմնագիտական համար, համաձայն 1864 թ.

պետական դպրոցների Կանոնագրի, եւ Մասնագիտական Դասարաններ կամ Լիկէոն, յատուկ ուսումն. ծրագրով եւ իրաւունքներով, համահասարակ Կայսրութեան Համալսարանների մի մասնաճիւղի՝ արեւելեան լեզուների յատուկ ուսումնասիրութեան համար: ձեմարանի այս կազմակերպութիւնը միանգամայն համապատասխանում էր նրա հիմնադիրների սկզբից ի վեր հետապնդած ձեմարանի հիմնական նպատակներին՝ ա. դարձնել իրենց դպրոցը այնպիսի ընդհանուր կրթութիւն տուող մի հիմնարկ, որի շրջանաւարտներն առանց արգելքի ու դժուարութեան ի վիճակի լինին մտնելու համալսարան ու ստանալ բարձրագոյն ուսում, եւ բ. արեւելեան լեզուների դասաւանդութիւնը դնել այնպիսի հիմքերի վրայ, որպէս զի ուսանողները պատրաստուէին թէ զիտական աշխատանքների համար արեւելեան ազգերի մշակոյթի ուսումնասիրական ասպարէզում եւ թէ ձեռք բերեն ձեռնհասութիւն վարելու պետական պաշտօններ Արեւելքում, որի հետ Ռուսաստանի փոխարարութիւնները օրէջօր դարգանում ու աւելի սերտանում էին:

Երկրորդ: ձեմարանի Մասնագիտական դասարանները ստանում էին այն բոլոր իրաւունքներն եւ առանձնաշնորհումները, որոնցով օժտուած էին Կայսրութեան համալսարանները, համաձայն 1863 թ. յունիս 18ի Նոր Կանոնագրի, սակայն առանց իրաւունքի գիտական կոչումներ տալու իր շրջանաւարտներին: Դրա փոխարէն եւ որպէս զի խրախուսուած լինին ուսանողներին նուիրելու արեւելեան լեզուների ուսման, Լիկէոնի շրջանաւարտները ստանում էին Ժ եւ ԺԲրդ կարգի աստիճաններ¹: Լիկէոնի պրոֆեսորներն ու դասախօսները ստանում էին այն բոլոր առանձնաշնորհումները, որոնք վերա-

¹ Պետրոս Մեծը, կամենալով պետական ծառայութեան մէջ ոչնչացնել պետական ծառայան սկզբունքը, որին վերապահուած էին մեծ առանձնաշնորհումներ հանդէպ ո՛չ պետական ծառայում ունեցող պետական ծառայողների, եւ փոխարինել այն անձնական արժանիքների սկզբունքով, 1722 թ. հրատարակեց «Յուցակ ծառայութեան աստիճանների» օրէնքը, ըստ որի բոլոր պետական պաշտօնները բաժանուած էին 14 կարգի կամ աստիճանի: Ամենից ստորը՝ 14րդն էր, որից եւ սկսում էր ամէն մի պետական պաշտօնեայ իր ծառայութիւնը եւ աստիճանարար բարձրանում մինչեւ առաջին կարգը, համապատասխան ցուցադրած իր ետանդի, շնորհի, նուիրումի ու աշխատանքի արդիւնաւէտութեան: Այս օրէնքը իր պիտի մէջ էր ամբողջ Ռուսաստանում մինչեւ 1918 թ.: